ԱԹԱԲԵԿ ԽՆԿՈՅԱՆ

Բանաստեղծություններ

aegitas

Աթաբեկ Խնկոյան
Բանաստեղծություններ

http://www.litres.ru/pages/biblio_book/?art=24429766
Բանաստեղծություններ:
ISBN 9781772466874

Аннотация

Խորիմաստ ու խոսուն են Խնկո Ապոր բանաստեղծությունները: Դրանցում փառաբանվում է աշխատավոր մարդը(Գյուղացին ու Աստվածը), դատապարտում նախանձը: Ինչպես իր առակներում ու հեքիաթներում, բանաստեղծություններում եւս հեղինակը վեր է հանում հասարակական տարբեր խավերի արատները, ծաղրում ընչաքաղցությունը, փառաբանում տաղանդն ու գովաբանում գեղեցկությունը: Խնկո Ապոր բանաստեղծություններում կենդանիները, բնության տարերքներն ու անշունչ առարկաները կենդանանում, շունչ ու հոգի են առնում, ու դրանց միջոցով գրողը ներկայացնում է մարդկության արատներն եւ վեհացնում մաքուրն ու շիտակը (Ամպն ու Սարը, Քամին ու Մարագը, Հիվանդ եղջերուն, Անծեղն ու Առյուծը): Աթաբեկ Խնկոյանը մեզ է փոխանցել նաեւ բազմաթիվ փոխադրություններ, վիպասանության փայլուն նմուշներ, որոնք մինչ օրս էլ հիացնում են իրենց կատարելությամբ, մտքի սրությամբ ու անկեղծությամբ:

Содержание

ԳԱՅԼՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ 4
ԳԱՅԼՆ ՈՒ ՇՆԵՐԸ 6
ԺԱՆՏԱԽՏ 7
Конец ознакомительного фрагмента. 10

Աթաբեկ Խնկոյան
Բանաստեղծություններ

ԳԱՅԼՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Գայլն անտառից
Փախավ գեղը.
– Նեղն եմ, նեղը, —
Ասավ կատվին, —
Ասլան բալա,
Քո հոր պատվին
Մի ճար արա:
Մի տես հլա,
Որսորդ ու շուն,
Թազի, թուլա
Միսս են կրծում,
Ինձ հալածում:
Ա՛յ կտրվի
Դրանց հոտը,
Մի մարդ ցույց տուր
Պահվեմ մոտը:
(Ա՛յ ցեղակից, – գոչեց կատուն, —
Գնա մտիր Մարոյենց տուն.
Նա չափազանց բարի կին է:
– Ես էլ գիտեմ, որ անգին է,

Բայց որ նրա հորթն եմ կերե՛լ…
(Բկիդ կանգներ, լավ չես արել:
Ա՛յ Դավթի մոտ կո՞ւզես կանչեմ:
(Ներանից էլ ես կամաչեմ.
Հենց ամառը
Կերա Դավթի փոքրիկ գառը…
(Ո՞ւմ ասեմ էլ…
Հա՛, մեր Զաքին:
(Էս գարնանն էլ
Նրա մաքին…
(Ո՞վ մնաց էլ.
Հա՛, երեցը:
(Էս աշնանն էլ
Նրա էծը…
(Ա՛յ դու ուտես
Ջոռի մեծը:
Քանի՞սն եղավ
Հի՛նգը…վե՛ցը…
Ա՛յ անամոթ,
Ի՞նչ երեսով
Դու գյուղ մտար,
Ի՞նչ է ուրիշ
Տեղ չգտա՞ր:
Գյուղն հիմա՞ր է,
Որ թշնամուն
Պատսպարե:
Ով ինչ բրթե,
Էն կխրթե:

ԳԱՅԼՆ ՈՒ ՇՆԵՐԸ

Գայլը մի օր
Տեսնում է, որ
Հովիվները դանակներով
Կտրատում են մի գեր ոչխար,
Իսկ շները լուռ, անվրդով
Թափվել են վար,
Գոմռում չեն,
Մոմռում չեն:
Գայլը հեռվից ի՞նչ է ասում.
– Կոտորվիք դուք… ի՞նչ վայնասուն
Կհանեիք դուք խմբովի,
Թե այդ բանը ես անեի:

ԺԱՆՏԱԽՏ

Կենդանյաց մեջ խիստ ժանտախտ էր,
Չմեռնելը շատ մեծ բախտ էր:
Ճգնաժամ էր օրհասական ,
Ու ձայն տվեց առյուծ արքան.
– Կենդանինե՛ր ինչքան որ կան,
Թող հավաքվեն, գահիս մոտ գան:
Է՛, արքայի հրաման էր,
Ժանտախտի պես դաժան բան էր:
Սարսուռ ընկավ դաշտ ու անտառ,
Գազանները լեղապատառ
Մեծ ու փոքր, բազմատարազ,
Արջ ու հովազ,
Վագր ու վարազ,
Չար բորենի, աղվես ու գայլ,
Մեկ էլ էշը վսեմափայլ,
Հավաքվեցին առյուծի դեմ,
Արքան գոչեց. – Ես ձեզ հետ եմ,
Ի՜մ իշխաններ, ես լավ գիտեմ,
Որ ձեր սրտից արյուն կերթա,
Եթե բանը այսպես գնա,
Այս ժանտախտին, ականջը խուլ,
Ամբողջ ցեղով կգնանք կուլ:
Ինձ լսեցեք, բան եմ ասում.
Ո՞ւմ մեղքիցն է այսպես ցասում:

Աշխարհն առավ ցեղիս լացը,
Հա՛ վառվում է չորն ու թացը:
Եկեք, խնդրեմ, անկեղծորեն
Խոստովանենք, որքս անօրեն
Բան ենք բռնել,
Մեծ մեղք գործել:
Մեկն ես, որ ձեր գլխավորն եմ,
Տեր ամենից մեղավորն եմ.
Քանի անմեղ գառ ու ոչխար
Ուղարկել եմ մթին աշխարհ,
Ու հովվին էլ լեղապատառ
Ինչպես արել ճոթ ու պատառ:
Սա իմ մեղքն է, ճիշտն եմ ասում.
Որ բերել է այսպես ցասում:
Մեղքերն ասին արջ ու հովազ,
Չար բորենին, վագր ու վարազ
Հետո և գայլ:
Վերջը էշը վսեմափայլ
Ասավ. – Սա է միակ մեղս,
Արտի մոտով անցած տեղս,
Հակառակ է չարը բարուն,
Ես մի բերան զարկի գարուն…
Աղվեսն այստեղ՝ լսեց, լսեց,
Ոտքի կանգնեց, մի ճառ խոսեց
Այնպես արդար,
Այնպես ճարտար,
Որ պիտ հիշվի հա՛ դարեդար:
– Առեք, – ասավ, – սուլթան ու խան,
Առեք նույնպես և իմ մեղան.

Ես ամենից մեղավոր եմ,
Բայց թե կացեք տեղավորեմ.

Մեր արքան վես,
Մեր արքան հեզ,

Խոստովանեց իր մեղքը մեզ,

Конец ознакомительного фрагмента.

Текст предоставлен ООО «ЛитРес».

Прочитайте эту книгу целиком, купив полную легальную версию на ЛитРес.

Безопасно оплатить книгу можно банковской картой Visa, MasterCard, Maestro, со счета мобильного телефона, с платежного терминала, в салоне МТС или Связной, через PayPal, WebMoney, Яндекс.Деньги, QIWI Кошелек, бонусными картами или другим удобным Вам способом.